ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 02.07.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2018/84

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 14.06.2018թ. թիվ 03/26-3/10749-18 գրությամբ «ԵրՊԽԳ Մետալ Ստիլ» ՓԲԸ-ին և Ա/Ձ Նորիկ Հակոբջանյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայկական Ատոմային Էլեկտրակայան» ՓԲԸ-ի 13.06.2018թ. թիվ Է/40/304-18 գրության հիման վրա, 14.06.2018թ. թիվ 03/26-3/10749-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, խնդրելով նախաձեռնել «ԵրՊԽԳ Մետալ Ստիլ» ՓԲԸ-ին և Ա/Ձ Նորիկ Հակոբջանյանին (այսուհետ՝ Մասնակիցներ) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **<u>«ԵրՊԽԳ Մետալ Ստիլ» ՓԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«ԵրՊԽԳ Մետալ Ստիլ» ՓԲԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 22.06.2018թ. գրությամբ հայտնել է, որ «Հայկական Ատոմային Էլեկտրակայան» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից հայտարարվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-98/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Վերոնշված Ընթացակարգին, ի թիվս այլ մասնակիցների, մասնակցության հայտեր են ներկայացրել նաև «ԵրՊԽԳ Մետալ Ստիլ» ՓԲԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) և Ա/Ձ Նորիկ Հակոբջանյանը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.05.2018թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝

- «ԵրՊԽԳ Մետալ Ստիլ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա են անճշտություններ, մասնավորապես՝ տնօրեն Ն. Հակոբջանյանի փոխարեն ստորագրել է Գևորգ Կարապետյանը, ինչպես նաև հավելված 2.1-ում ընթացակարգի ծածկագիրը «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-98/18»-ի փոխարեն գրված է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-97/18» և ստորագրել է Արտակ Հակոբյանը:
- Ա/Ձ Նորիկ Հակոբջանյանի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա են անճշտություններ, մասնավորապես՝ Ն. Հակոբջանյանի փոխարեն ստորագրել է Արտակ Հակոբյանը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը վերը նշված նիստով որոշել է նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով՝ առաջարկելով «ԵրՊԽԳ Մետալ Ստիլ» ՓԲԸ-ին և Ա/Ձ Նորիկ Հակոբջանյանին շտկել անճշտությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.06.2018թ. ժամը 12:00-ին տեղի ունեցած նիստի արձանագրության համաձայն՝ հանձանժողովի քարտուղարը գնահատող հանձնաժողովին ներկայացրել է «ԵրՊԽԳ Մետալ Ստիլ» ՓԲԸ-ի և Ա/Ձ Նորիկ Հակոբջանյանի կողմից ներկայացված շտկված փաստաթղթերը, որոնց ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ «ԵրՊԽԳ Մետալ Ստիլ» ՓԲԸ-ի տնօրեն Ն. Հակոբջանյանը լիազորել է Գևորգ Կարապետյանին, իսկ Ա/Ձ Նորիկ Հակոբջանյանը՝

Արտակ Հակոբյանին ստորագրել գնման ընթացակարգի փաստաթղթերը: Հանձնաժողովն արձանագրել է, որ առկա է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու մասին» թիվ 526-Ն որոշման 119-րդ կետի 2-րդ ենթակետի «գ» և «դ» ենթակետերի պահանջների խախտում:

Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հաշվի է առել այն հանգամանքը, որ «ԵրՊԽԳ Մետալ Ստիլ» ՓԲԸ-ի տնօրենը և Ա/Ձ Նորիկ Հակոբջանյանը նույն անձինք են և որոշել է մերժել «ԵրՊԽԳ Մետալ Ստիլ» ՓԲԸ-ի և Ա/Ձ Նորիկ Հակոբջանյանի կողմից ներկայացված հայտերը:

Ուսումնասիրելով վերոթվարկված փաստերը՝ Ընկերությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Մ. Անանյանի ուշադրությունն է հրավիրում հետևյալ հանգամանքների վրա.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ արգելվում է սույն օրենքով և դրա հիման վրա ընդունված իրավական այլ ակտերով սահմանված փոխկապակցված անձանց և (կամ) միևնույն անձի (անձանց) կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս միևնույն անձի (անձանց) պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը գնման միևնույն գործընթացին:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ մասի 16-րդ կետի համաձայն՝ գնման ընթացակարգին արգելվում է նույն կարգով սահմանված

փոխկապակցված անձանց միաժամանակյա մասնակցությունը:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին...:

Կարգի 119-րդ կետի 2-րդ ենթակետի «գ» և «դ» ենթակետերի համաձայն՝

2) ֆիզիկական և իրավաբանական անձինք համարվում են փոխկապակցված, եթե նրանք գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից կամ եթե տվյալ ֆիզիկական անձը կամ նրա ընտանիքի անդամը հանդիսանում է՝

գ. տվյալ իրավաբանական անձի խորհրդի նախագահ, խորհրդի նախագահի տեղակալ, խորհրդի անդամ, գործադիր տնօրեն, նրա տեղակալ, գործադիր մարմնի գործառույթներ իրականացնող կոլեգիալ մարմնի նախագահ, անդամ,

դ. իրավաբանական անձի այնպիսի աշխատակից, որն աշխատում է գործադիր տնօրենի անմիջական ղեկավարության ներքո կամ իրավաբանական անձի կառավարման մարմինների կողմից որոշումների ընդունման հարցում որևէ էական ազդեցություն ունի.

Այսպիսով, «ԵրՊԽԳ Մետալ Ստիլ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Մ. Անանյանի վարույթում քննվող թիվ ՍՑ-ԱՄ-2018/84 ընթացակարգ նախաձեռնելու համար հիմք է հանդիսացել «Հայկական Ատոմային Էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից ՀՀ ֆինանսների նախարարությանը ուղղված 13.06.2018թ. թիվ Ε/40/304-1 գրությունը, որով Պատվիրատուն տեղեկացրել է, որ խախտվել է Կարգի 119-րդ կետի 2-րդ ենթակետի «գ» և «դ» ենթակետերի պահանջները:

Մինչդեռ, ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետը հստակ սահմանում է, որ պատվիրատուն կարող է դիմել լիազոր մարմնին միայն Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, սակայն, ինչպես արդեն նշվել է, ըստ «Հայկական Ատոմային Էլեկտրակայան» ՓԲԸ-ի՝ «ԵրՊԽԳ Մետալ Ստիլ»

ՓԲԸ-ն և Ա/Ձ Նորիկ Հակոբջանյանը թույլ են տվել Կարգի 119-րդ կետի 2-րդ ենթակետի «գ» և «դ» ենթակետերի պահանջների խախտում:

Վերոհիշյալ փաստերը վկայում են, որ «ԵրՊԽԳ Մետալ Ստիլ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԱՄ-2018/84 ընթացակարգը պատվիրատուի կողմից նախաձեռնվել է ոչ պատշաճ իրավական հիմքի համաձայն, ինչի հետևանքով նշված ընթացակարգը իրավաչափ չէ և հակասում է ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի պահանջներին:

Ավելին՝ մասնակիցը կարող է ընդգրկվել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե համաձայն Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Այնինչ՝ «Հայկական Ատոմային Էլեկտրակայան» ՓԲԸ-ն 13.06.2018թ. թիվ Է/40/304-1 գրությունով տեղեկացրել է, որ «ԵրՊԽԳ Մետալ Ստիլ» ՓԲԸ-ն և Ա/Ձ Նորիկ Հակոբջանյանը թույլ են տվել Կարգի 119-րդ կետի 2-րդ ենթակետի «գ» և «դ» ենթակետերի պահանջների խախտում, իսկ ՀՀ ֆինանսների նախարարությունը խնդրել էր նախաձեռնել բողոքարկման գործընթաց՝ «ԵրՊԽԳ Մետալ Ստիլ» ՓԲԸ-ին և Ա/Ձ Նորիկ Հակոբջանյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար՝ Կարգի 119-րդ կետի 2-րդ ենթակետի «գ» և «դ» ենթակետերի պահանջների հնարավոր խախտման հիմքով:

Ընկերությունը գտնում է, որ նման պայմաններում առկա չէ «ԵրՊԽԳ Մետալ Ստիլ» ՓԲԸ-ի կողմից Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված որևէ հիմքի

խախտում, իսկ Կարգի 119-րդ կետի 2-րդ ենթակետի «գ» և «դ» ենթակետերի պահանջների հնարավոր խախտումը հիմք է միայն մասնակցի հայտը մերժելու, այլ ոչ թե վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

Ինչ վերաբերում է Ընթացակարգի հրավերի թիվ 2 Հավելվածով նախատեսված հայտարարությունը իրականությանը անհամապատասխան գնահատելու հնարավորությանը, ապա անգամ նման հնարավոր գնահատականի դեպքում կարող էր ի հայտ գալ միայն 22.12.2010թ. ընդունված և այլևս չգործող «Գնումների մասին» ՀՀ օրենքով մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմք հանդիսացող կեղծ տվյալի ներկայացումը, սակայն, ինչպես հայտնի է՝ 2016 թվականի դեկտեմբերի 16-ին ընդունված և ներկայումս գործող «Գնումների մասին» ՀՀ օրենքով «կեղծ տվյալի ներկայացումը» որպես մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմք հանվել է օրենքի տեքստից:

Բացի այդ, Ընկերությունը վկայակոչել է միևնույն փաստական հանգամանքներով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Մ. Անանյանի կողմից 18.06.2018թ. ՍՑ-ԱՄ-2018/68 որոշումը, որով վերջինս արձանագրել է, որ «Վահրադյան Շին» և «Մ. ԲՈՒԱՏ» ՍՊ ընկերությունները թույլ չեն տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված որևէ խախտում, ուստի «Վահրադյան Շին» և «Մ. ԲՈՒԱՏ» ՍՊ ընկերություններին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Նշված որոշման իրավական հիմնավորման հիմքում Մ. Անանյանի կողմից դրվել է այն հանգամանքը, որ փոխկապակցված անձանց միաժամանակյա մասնակցությունը միևնույն գնման ընթացակարգին հանդիսանալով հայտը մերժելու հիմք, միևնույն ժամանակ չի հանդիսանում Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմք:

Ընկերությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է հաշվի առնել ներկայացված փաստերը և փաստարկները ու «ԵրՊԽԳ Մետալ Ստիլ» ՓԲԸ-ին

չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ Ընկերության կողմից Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված որևէ խախտում թույլ չտալու հիմքով և ՍՑ-ԱՄ-2018/84 ծածկագրով նախաձեռնած պաշտոնական ընթացակարգը մերժել:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/84 ընթացակարգի շրջանակներում 18.06.2018թ. ժամը 10:15-ին և 25.06.2018թ. ժամը 11:25-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, 25.06.2018թ. ժամը 11:25-ի նիստին ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>Ա/Ձ Նորիկ Հակոբջանյանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Ա/Ձ Նորիկ Հակոբջանյանը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 22.06.2018թ. գրությամբ՝ «ԵրՊԽԳ Մետալ Ստիլ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված գրավոր դիրքորոշման մեջ նշված նույն հիմնավորումների շրջանակներում հայտնել է, որ առկա չէ Ա/Ձ Նորիկ Հակոբջանյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ա/Ձ Նորիկ Հակոբջանյանը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/84 ընթացակարգի շրջանակներում 18.06.2018թ. ժամը 10:15-ին և 25.06.2018թ. ժամը 11:25-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, 25.06.2018թ. ժամը 11:25-ի նիստին ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են 22.06.2018թ. գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

4. <u>«Հայկական Ատոմային Էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստերը.</u>

«Հայկական Ատոմային Էլեկտրակայան» ՓԲԸ-ն, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 13.06.2018թ. թիվ Ε/40/304-18 գրությամբ հայտնել է, որ «Հայկական Ատոմային Էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-98/18» ծածկագրով

խողովակի գնման ընթացակարգի հայտերի բացման նիստում գնահատող հանձնաժողովը հրավերով սահմանված փաստաթղթերի գնահատման արդյունքում պարզել է, որ մասնակցության հայտ են ներկայացրել «ԵրՊԽԳ Մետալ Ստիլ» ՓԲԸ-ն՝ տնօրեն Նորիկ Հակոբջանյան, և Ա/Ձ Նորիկ Հակոբջանյանը:

Պատվիրատուն հայտնել է, որ խախտվել է ՀՀ կառավարության «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու մասին» 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 119-րդ կետի 2-րդ ենթակետի «գ» և «դ» ենթակետերի պահանջները, այն է՝ գնումների հետ կապված հարաբերությունները կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրության իմաստով ֆիզիկական անձինք համարվում են փոխկապակցված, եթե նրանք միևնույն ընտանիքի անդամ են, կամ վարում են ընդհանուր տնտեսություն, կամ համատեղ ձեռնարկատիրական գործունեություն, կամ գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից կամ եթե տվյալ ֆիզիկական անձը կամ նրա ընտանիքի անդամը հանդիսանում է՝

գ. տվյալ իրավաբանական անձի խորհրդի նախագահ, խորհրդի նախագահի տեղակալ, խորհրդի անդամ, գործադիր տնօրեն, նրա տեղակալ, գործադիր մարմնի գործառույթներ իրականացնող կոլեգիալ մարմնի նախագահ, անդամ,

դ. իրավաբանական անձի այնպիսի աշխատակից, որն աշխատում է գործադիր տնօրենի անմիջական ղեկավարության ներքո կամ իրավաբանական անձի կառավարման մարմինների կողմից որոշումների ընդունման հարցում որևէ էական ազդեցություն ունի:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/84 ընթացակարգի շրջանակներում 18.06.2018թ. ժամը 10:15-ին և 25.06.2018թ. ժամը 11:25-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը:

5. ՍՑ-ԱՄ-2018/84 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՍՑ-ԱՄ-2018/84 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար խողովակի ձեռքբերման համար հայտարարվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-98/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «ԵրՊԽԳ Մետալ Ստիլ» ՓԲԸ-ն և Ա/Ձ Նորիկ Հակոբջանյանը:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.05.2018թ. ժամը 15:00-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 04.06.2018թ. կայացրած որոշմամբ «ԵրՊԽԳ Մետալ Ստիլ» ՓԲԸ-ի և Ա/Ձ Նորիկ Հակոբջանյանի հայտերը մերժել է այն հիմնավորմամբ, որ «ԵրՊԽԳ Մետալ Ստիլ» ՓԲԸ-ի տնօրենն ու Ա/Ձ Նորիկ Հակոբջանյանը նույն անձինք են:

6. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 14.06.2018թ. թիվ 03/26-3/10749-18 գրությունը, «Հայկական Ատոմային Էլեկտրակայան» ՓԲԸ-ի 13.06.2018թ. թիվ Է/40/304-18 գրությունը և կից փաստաթղթերը, «ԵրՊԽԳ Մետալ Ստիլ» ՓԲԸ-ի և Ա/Ձ Նորիկ Հակոբջանյանի դիրքորոշումները հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ արգելվում է սույն օրենքով և դրա հիման վրա ընդունված իրավական այլ ակտերով սահմանված փոխկապակցված անձանց և (կամ) միևնույն անձի (անձանց) կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս միևնույն անձի (անձանց) պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը գնման միևնույն գործընթացին:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին:

Կարգի 32-րդ կետի 16-րդ ենթակետի համաձայն՝ գնման ընթացակարգին արգելվում է սույն կարգով սահմանված փոխկապակցված անձանց միաժամանակյա մասնակցությունը:

Կարգի 119-րդ կետի 2-րդ ենթակետի «գ» և «դ» պարբերությունների համաձայն՝ գնումների հետ կապված հարաբերությունները կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրության իմաստով ֆիզիկական և իրավաբանական անձինք

համարվում են փոխկապակցված, եթե նրանք գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից կամ եթե տվյալ ֆիզիկական անձը կամ նրա ընտանիքի անդամը հանդիսանում է՝տվյալ իրավաբանական անձի խորհրդի նախագահ, խորհրդի նախագահի տեղակալ, խորհրդի անդամ, գործադիր տնօրեն, նրա տեղակալ, գործադիր մարմնի գործառույթներ իրականացնող կոլեգիալ մարմնի նախագահ, անդամ կամ իրավաբանական անձի այնպիսի աշխատակից, որն աշխատում է գործադիր տնօրենի անմիջական ղեկավարության ներքո կամ իրավաբանական անձի կառավարման մարմինների կողմից որոշումների ընդունման հարցում որևէ էական ազդեցություն ունի:

Նույն 3-րդ ենթակետի «գ» պարբերության համաձայն՝ գնումների հետ կապված հարաբերությունները կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրության իմաստով՝ ֆիզիկական անձի կարգավիճակ չունեցող մասնակիցները համարվում են փոխկապակցված, եթե նրանցից մեկի որևէ կառավարման մարմնի կամ նման պարտականություններ կատարող այլ անձանց, ինչպես նաև նրանց ընտանիքի անդամներից որևէ մեկը միաժամանակ հանդիսանում է մյուս անձի որևէ կառավարման մարմնի անդամ կամ նման պարտականություններ կատարող այլ անձ:

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար խողովակի ձեռքբերման համար հայտարարվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-98/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «ԵրՊԽԳ Մետալ Ստիլ» ՓԲԸ-ն և Ա/Ձ Նորիկ Հակոբջանյանը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.05.2018թ. ժամը 15:00-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «ԵրՊԽԳ Մետալ Ստիլ» ՓԲԸ-ի և Ա/Ձ Նորիկ Հակոբջանյանի կողմից Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ներկայացված փաստաթղթերից պարզվել է, որ «ԵրՊԽԳ Մետալ Ստիլ» ՓԲԸ-ի տնօրեն Ն. Հակոբջանյանը լիազորել է Գևորգ Կարապետյանին, իսկ Ա/Ձ Նորիկ Հակոբջանյանը՝ Արտակ Հակոբյանին ստորագրել գնման ընթացակարգի փաստաթղթերը: Հանձնաժողովը արձանագրել է նաև, որ առկա է ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 119-րդ կետի 2-րդ ենթակետի «գ» և «դ» պարբերությունների խախտում:

Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 04.06.2018թ. կայացրած որոշմամբ «ԵրՊԽԳ Մետալ Ստիլ» ՓԲԸ-ի և Ա/Ձ Նորիկ Հակոբջանյանի հայտերը մերժել է այն հիմնավորմամբ, որ «ԵրՊԽԳ Մետալ Ստիլ» ՓԲԸ-ի տնօրենն ու Ա/Ձ Նորիկ Հակոբջանյանը նույն անձինք են:

Այսպես «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե '

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Դրա հետ մեկտեղ Օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ արգելվում է սույն օրենքով և դրա հիման վրա ընդունված իրավական այլ ակտերով սահմանված փոխկապակցված անձանց և(կամ) միևնույն անձի (անձանց) կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս միևնույն անձի (անձանց) պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը գնման միևնույն գործընթացին:

Այսպիսով՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը հստակ սահմանում է մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը: Դրա հետ մեկտեղ Օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասը նախատեսում է փոխկապապակցված անձանց կողմից գնման միևնույն գործընթացին միաժամանակյա մասնակցելու արգելքը:

Ուսումնասիրելով գործում առկա նյութերը և դրանք համադրելով Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և 7-րդ հոդվածի 4-րդ մասի հետ, գտնում եմ, որ փոխկապակցված անձանց միաժամանակյա մասնակցությունը գնման միևնույն ընթացակարգին, հանդիսանալով մասնակիցների հայտը մերժելու հիմք, միևնույն

ժամանակ չի հանդիսանում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված՝ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմք:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ «ԵրՊԽԳ Մետալ Ստիլ» ՓԲԸ-ն և Ա/Ձ Նորիկ Հակոբջանյանը թույլ չեն տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի խախտում, ուստի Մասնակիցներին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 14.06.2018թ. թիվ 03/26-3/10749-18 գրությամբ՝

1. «ԵրՊԽԳ Մետալ Ստիլ» ՓԲԸ-ին (ՀՎՀՀ՝ 08909273) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:
2. Ա/Ձ Նորիկ Հակոբջանյանին (ՀՎՀՀ՝ 76807107) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**